## Արձանագրություն N1

Նիստը կայացել է 2025թ-ի սեպտեմբերի 22-ին: Նիստին մասնակցել են ծնողական խորհրդի 41 անդամներից 26-ը: Նիստին հրավիրված էին դպրոցի տնօրենի ուսումնական գծով տեղակալ Վ.Ղազարյանը և դպրոցի հաշվապահ Գ.Սաղաթելյանը:

**Օրակարգում՝**

1. Դպրոցի և ծնողների միջև կապի ամրապնդման, երեխաների դաստիարակության հարցում մանկավարժների և ծնողների կողմից միասնական պահանջների ձևավորման մասին: / Զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Անտոնյան /
2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագծի քննարկում: /Զեկուցող՝ դպրոցի հաշվապահ Գ.Սաղաթելյան/
3. Հաստատության ծնողական խորհրդի նախագահի ընտրություն /Զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Անտոնյան /

**Լսեցին 1**

Դպրոցի և ծնողների միջև կապի ամրապնդման, երեխաների դաստիարակության հարցում մանկավարժների և ծնողների կողմից միասնական պահանջների ձևավորման մասին: / Զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Անտոնյան /

Ա.Անտոնյանը իր զեկուցման մեջ կարևորեց դպրոցի ներքին կարգապահական կանոնների հետևողական պահպանումը և միասնական պահանջների շարունակականությունը:

Խոսվեց սննդի կազմակերպման, արտաքին տեսքի վրա ծնողների հետևողականության, արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներին ծնողների ներգրավվածության կարևորության մասին:

**Որոշեցին**

Դպրոցի և ծնողների միջև կապի ամրապնդման, երեխաների դաստիարակության հարցում մանկավարժների և ծնողների կողմից միասնական պահանջների ձևավորման համար աջակցել տնօրինությանը, ինչպես նաև մասնակցել սպասվելիք արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին, «Ոսկե աշուն» ամենամյա բարեգործական ցուցահանդես վաճառքին:

**Լսեցին 2.**

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագծի քննարկումը: /Զեկուցող՝ դպրոցի հաշվապահ Գ.Սաղաթելյան/

Գ. Սաղաթելյանը իր զեկուցման մեջ ներկայացրեց դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագիծը, որում նշված էր կանխատեսվող ծախսերը:

**Որոշեցին**

Ի նկատի ունենալ ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի նախագիծը և ուսումնասիրել այն:

**Լսեցին 3.**

Հաստատության ծնողական խորհրդի նախագահի ընտրության հարցը /Զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Անտոնյան /

Ա.Անտոնյանը առաջարկեց կատարել հաստատությունում ծնողխորհրդի նախագահի ընտրությունը ըստ սահմանված կարգի: Ընտրությունը կազմակերպելու նպատակով ծնողխորհրդին առաջնորդելով հաստատության Կանոնադրության 106-րդ կետի պահանջներով:

**Որոշվեց**

1. Գրանցել նախագահի առաջադրված թեկնածուներին՝
   - Վերոնիկա Բուռնուցյան
   - Լիլիթ Հովհաննիսյան
   - Զառա Բաղդասարյան
2. Հաստատել քվեաթերթիկի նմուշը
3. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը 2 անդամներից՝
   - Սարգսյան Տաթևիկ
   - Բոյաջյան Վերժինե
4. Հաշվիչ հանձնաժողովի հրապարակած տվյալների հիման վրա ամփոփեց հաստատության ծնողխորհրդի նախագահի ընտրության հետևյալ արդյունքները:

26 ծնողից ընտրությանը մասնակցեցին 25-ը, որից՝

- 21 կողմ - Վերոնիկա Բուռնուցյան
- 4 կողմ - Լիլիթ Հովհաննիսյան
- 0 ձայն - Զառա Բաղդասարյան

Կայացած ընտրությունների հիման վրա 1 տարի ժամկետով դպրոցի ծնողխորհրդի նախագահ է ընտրվել Վերոնիկա Բուռնուցյանը:

Ծնողխորհրդի նախագահ՝ Վ. Բուռնուցյան

22.09.2025թ.